## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

« 22 » հունվար 2018 թ.

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Փամբակ համայնք,
Հացեի 1փողոց 17

pambak.lori@mta.gov.am

098-86-93-09

No 07

Լոռու մարզի մարզպետ

Պարոն Ա. Նալբանդյանին

Ձեզ եմ ներկայացնում Փամբակ համայնքի ղեկավարի թիվ 02 որոշումը:

Առդիր 2 թերթ:

Համայնքի ղեկավար Ս. Է. Ութիխանյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# ՈՐՈՇՈՒՄ

<< 22 >> հունվարի 2018 թվականի N 02

### ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի դ) կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում հաստատել

1) Աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) ԱՌԿ խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի.

2. Խորհրդի անդամներին՝

1) մինչև սույն թվականի մայիսի 15-ը մշակել Լոռու մարզի Փամբակ համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը.

2) յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը իրականացնել համայնքի ԱՌԿ պլանի ճշգրտում:

3. ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալին՝ սույն որոշման 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել սույն որոշման փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծ:

4. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. Ովիխանյան

Հավելված N 1
Փամբակ համայնքի ղեկավարի
«22» հունվարի 2018թ-ի N 02 որոշման

# ԿԱԶՄ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

**Համայնքի ԱՌԿ խորհրդի կազմը՝**

1. խորհրդի ղեկավար՝ Ս. Ուլիխանյան
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Մ. Մխիթարյան
3. խորհրդի քարտուղար՝ Ն. Բիլյան,

4. խորհրդի անդամներ՝
   1) ավագանի Մ. Գալստյան,
   2) ավագանի Ս. Բեգլարյան,
   3) ավագանի Գ. Սարոյան,
   4) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Յ. Բաղրամյան,
բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Ա. Ուլիխանյան,
գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Թ. Բեգլարյան,
դ. կապի և տեղեկատվական փոխանակման պատասխանատու՝ Ա. Սարոյան,
ե. բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Շ. Հակոբյան,
զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Գ. Մալխասյան,
է. կոմունալ-էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Մ. Միրզախանյան,
ը. ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Ն. Անտոնյան,
թ. դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման պատասխանատու՝ Ա. Թունյան,
ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Ա. Ավետիկյան: